

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկում  
Նախագահ՝ Արթուր Զավադյան

« \_\_ » \_\_\_\_\_ 2011թ.

# **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

## **Փոփոխություն և լրացումներ**

### **Կենտրոնացված ռեեստրի վարման և պահառության կանոնակարգում**

1. «Կենտրոնացված ռեեստրի վարման և պահառության կանոնակարգ»-ի 1-ին գլխի 1.3.42. կետից հետո լրացնել նոր «1.3.43.» կետ հետևյալ բովանդակությամբ.  
«1.3.43. «օտարերկրյա անվանատեր». ըստ «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ոչ ռեզիդենտ համարվող անձ, որն իր երկրի օրենքների համաձայն իրավասու է իր անունով այլ անձանց պատկանող արժեթղթերի հաշիվներ ունենալ.»:
2. «Կենտրոնացված ռեեստրի վարման և պահառության կանոնակարգ»-ի 1-ին գլխի 1.5. կետից հետո լրացնել նոր «1.6.» կետ հետևյալ բովանդակությամբ.

«1.6. Սույն կանոնակարգի դրույթները չեն տարածվում օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվների և դրանցով կատարվող գործառնությունների վրա:»:

3. «Կենտրոնացված ռեեստրի վարման և պահառության կանոնակարգ»-ի 3-րդ գլխի 3.4.4. կետը ճանաչել ուժը կորցրած:

4. Անցումային դրույթներ

Սույն փոփոխությունը և լրացումները հանդիսանում են «Կենտրոնացված ռեեստր վարման և պահառության կանոնակարգ»-ի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցման պահից:

Հաստատված է.

«Հայաստանի կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ

Դիտորդ խորհրդի 20.04.2011թ. որոշմամբ

Ա. Մելիքյան

ք.Երևան